




ՀԱՅԻՐԱՅԻՆ ԴԱՐԱՆ

ԱՐԱՐԱՆԻ ԴԱՐԱՆ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 137

7 ՄԱՐՏ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՐ
ԵՆՐԱՆ
ՏՊԻՐԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Մարտ	8	†	Կիր. զկ.	Գ. Բառասնորդաց պահոց: Անառակին:
	9		Բշ. դձ.	ԺԵ. or աղցից:
	10		Գշ. ղկ.	ԺԶ. or »
	11		Դշ. ամ.	ԺԷ. or »
	12		Եշ. ակ.	ԺԸ. or »
	13		Ուր. բձ.	ԺԹ. or »
	14		Շք. բկ.	Ի. or Մեծ-Պահոց: Եւ Սրբոյն Յովնան- նու Երուսաղեմայ Հայրապետին :



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱԲԱՆԹ-ԱԹԵՐԹ

Զորրորդ տարի ⑦ 7 Մարտ 1914 ⑦ Թիւ 137

«Մերական Քառանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը շա-
բունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնատուութեան համար
Մերական Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարդ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօլսո Պետրոս Ժ.Բ. Թերզեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտմարաւ:

ԴԵՊՐԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

Գ.

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՆԴԷՊ

Ամօթխածութեան, համեստութեան թըշ-
նամիններն, որոնք աւանդ բազմացած են և
զիրենք նոր քաղաքականացման հեղինակներ
կը կարծեն, կ'արդարացնեն ըսածնին մար-
դուն ծագումը անասնոց հետ չլիթելով, ու-
րոնցմէ, կ'ըսէ Engels, չի կրնար անջատուիլ
մարդը, նուազ կամ աւելի անասանք ըլլալու
տարբերութիւն մը կայ միայն անասնութեան
եւ մարդկութեան մէջ: Այս սկզբունքով չեմ
զարմանար որ զգայականութիւնը՝ վերին օ-
րհնք մը ըլլայ, ինչպէս կ'ուզէ նիւթապաշտ բա-
րոյականը, մարդու սանձարձակ գործելուն,

որ բնական ընտրողութեան (sélection natu-
relle) բերմամբ պէտք է հիմն ըլլայ ամուսնու-
թեան եւ որուն հետեւանօք սեռային հաւ-
ցի միակ լուծումը պիտի ըլլայ՝ ապագայ ըն-
կերութեան մէջ, ազատ սերը: Եւ դաստիա-
րակութեան գործոյն մէջեւ պիտի վստաւի
մերկութեան դեմ ամօքը, որ գեղեցկութեան
զգացումը կը բքացնէ մանաւանդ մարդկա-
յին մարմնոյ դիմաց, որ ճիշդագոյն ամենա-
փառաւոր արտայայտման է (Stern). ասոր
համար պէտք է երկսեռ ընել զպրոցները,
երկսեռ դաստիարակութիւնը, զոր աւելի ա-
զատ և զգայական վերին օրէնքին յարմար
ընելու համար՝ հարկ պիտի ըլլայ ջնջել ըզ-
գեսաներն ալ, ինչպէս կ'ըսէ Պէպէլ¹: — Կա-
րելի՞ է ասկից աւելի ստորնացնել մարդուն

¹ Մեր ուղգին մէջ ալ այս տգեղ սկզբունքներն
աւանդ, դաստիարակութեան, նորոգեւութեան ոյժ.
մեթօթիւնը կը գծեն պարզ և ո՛րքան աւելի կը գործ.

արժանապատուութիւնը՝ Հեթանոսը՝ Կիկերոնի բերնով՝ Կ'ողբար որ չէր գտներ իր մէջ կասարեալ մարդը եւ զայն միայն կը յսէր նկարագրուած փիլիսոփաներու տեսութիւններով։ Եւ հեթանոսին համար այդ ենթադրական մարդը պիտի ըլլար այն, որ իւր ստորին զգայական մասին պիտի իջնէր անպէս, ինչպէս արդար հայր մը իւր բարի ողորդ (Կիկ. Խն. Տուսկ. Բ. 12. 51)։ Իսկ հիմայ որ քրիստոնէութիւնը ո'չ մէկ, այլ հազարաւոր օրինակներ ընծայած է այդ կատարեալ մարդէն, նիւթապաշտ վերանորոգիչներ(?) մարդկային ընկերութեան՝ կ'ուզեն դառնալ հեթանոսութեան օրերուն, վասն զի իրենց համար անվիճելի է մարդու անասնական ծագումը։

Չի կարծուի թէ նիւթերնէս շեղեցանք այս խորհրդածութիւններով։ ո'չ. բարւոյն հանդէպ ազատութեան վերաբերումներու հիմնական սկզբունքներն են որ կը քաղենք եւ անոնց դէմ կը յիշեցնենք մոլորեալ ազատականութեան ցնորքներն, որպէս զի դիւրին ըլլայ որոշել թէ որ մէկը բանաւոր է եւ ցուցնել միանգամայն թէ զարգացումի անուամբ, արդի քաղաքականացման պատրուակաւ հրապարակ նետուած եւ յաճախ գործադրուած դաստիարակութեան, ամուսնութեան մասին արմատական անկրօններու ծրարութիւնը, ո'ւսկից ծագում առած են։ Նիւթապաշտութիւնն՝ խղճելով մարդուն յոյսերն ապագայ կենսոց վրայ՝ կը վերցնէ բարւոյ եւ չարի խտրութիւնը։ հետեւաբար մարդկային կամքի ինքնիշխանութիւնը, պատասխանա-

տուութեան եւ արժանեաց խթաններն՝ չարէ զգուշանալու, առ բարին յառաջանալու։ Մարդը նիւթ կ'ընէ, որ իրմէ անկախ օրէնքներու մը հոսանքին ձգուած՝ անկարող կ'ըլլայ ո' եւ է բարոյական գործի։ Վասն զի այս պարագային անոր հոգեկան գործունէութիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ բացատրութիւն մը իր զգայարանաց. ասով մարմնապաշտութիւնը, ամենակտի անամօթութիւններն կ'առաքինանան։ Եւ ինչո՞ւ համար այսպէս չըլլայ, անգամ մը որ մարդն ուրիշ բան չնկատուի բայց եթէ նիւթի բարձրագոյն աստիճանի ծաւալումն երկրաբնակ տեսակներու յեղաշրջման մէջ, եւ որ հետեւաբար ազատութեամբ չի գործեր, այլ բնագոյնի հարկին տակ։ մարդկային կամքը այն ատեն, Լուստրի ըսածին պէս, կ'ըլլայ ձի մը, որուն վրայ կը ձիավարէ սասանան։ մարդ-կենդանի եղած, մարդ-նիւթը, եւ սա մարդ-մեքենայ մը, որ միւս բոլոր մեքենաներէն կը տարբերի անիւ մը աւելի ունենալուն համար, խիղճը եւ գիտակցութիւնը, եւ ասոր վերին օրէնք են իր միտումներն։ Ահա ազատութեան անուամբ ինչպէս ամենադառն ու անվայել գերութեան, ստրկացման, անասնացման, թանձրացման վիճակը կը պատրաստուի մարդկութեան արդի նիւթապաշտ ու անկրօն ազատարարներու կողմանէ։

Մենք ուղիղ բանականութեան միւղ սորվեցուցած գեղեցկութեան զաղափարէն իջանք տեսնելու մոլորեալ բանականութեան հակադրած տգեղութիւնը, որ զմարդը կը ստորնացնէ մինչեւ անասնութիւն, մինչեւ գարշութեանց տիղմը։ որպէս զի տեսնենք թէ ո'ր մէկը կ'ապահովէ եւ կ'ազատէ մարդկային ազատութիւնը։ Յայտնապէս ուղեցինք մենք բարոյական գեղեցկութեան վրայ սեւեռել աչքերնիս եւ անոր մէջ ազնուացած տեսնել նոյն իսկ նիւթական գեղեցկութիւնը, հակառակ մարմնապաշտներու ըրածին, որ նիւթական գեղեցկութեան տիղմին մէջ բարոյական գեղեցկութիւնը թաղել կ'ուզեն։ Կ'արժէ որ քիչ մըն ալ հետապնդենք մեր տեսութեան հետեւէն։ Ճիշտպէս մարմնոյ գեղեցկութիւնը, կ'ըսէ Կիկերոն, անդամներու յար-

ծին։ — Արդէն ինչ է laïque բառած դաստիարակութիւնը, որ արտաքսած է բարուց աւանդական զգուշութիւններն։ նիւթապաշտ եւ մարմնասէր հագեցանութեան մը գործադրութիւնն է, որ զարգացումի, ճաշակի, քաղաքականացման անուններով կը զգեստուարէ ամենացած գգայնափրութիւն եւ վաւարտ կրքեր։ — Ինչ է արդի նորաձեւութեան հիմնական ուղեգիծն. արտաքին հագուստի վրայ ալ ներքին մեքէլութիւնը ցայտեցնել, մարմնասիր տկար սեռին, ինչ որ շատ անգամ երբեմն գեղեցիկ ըսուած սեռն կը տգեղացնէ։ — Իսկ տպագրութիւնը, աւա՞ղ, որքան կը խնկարէ այս շարժումներուն՝ գեղարուեստի պատրուակաւ։

մար գուգադրութեամբ կը գրաւէ մեր աչեան եւ անոր ամեն մասանց համաշափութեամբ կը զուարեացնէ, նոյնպէս բարուց մեջ ինչ որ վայելուչ է, հաճոյական կ'ըլլայ կենակցողներու, ամեն խօսքերու եւ գործոց կարգաւորութեամբ, ներդաւանակութեամբ եւ չափաւորութեամբ» (յդ. Պշտ. Ա. 28): Այս իմաստով գեղեցկութիւնը առաքինութիւն է, կ'ըսէ հրեշտակային Վարդապետը, վասն զի հոգեկան գեղեցկութիւնը յայտն կը կայանայ, որ մարդուն կենցաղն ու գործը համաշափ ըլլայ բանականութեան հոգեկան պայծառութեանը: Արդ մեր գործոց այս ներդաւանակութիւնը առաքինութիւն կ'ըսուի, որ բանականութեան զեկով մարդկային ամէն բան կը կառավարէ և կ'ուզէ: Ահա այս իմաստով է որ Ս. Սգոստիոսն առաքինութիւնը կ'անուանէ բանաւոր գեղեցկութիւն (Հմտ. 2-2. Խ. 143. յ. 2): Եւ իրաւամբ. վասն զի լսեցինք Կիկերոնի բերնէն թէ գեղեցիկն վայելուչ ալ կ'ըսուի, և վայելուչն այն է մեզ համար, որ կը պատշաճի մարդու անասուններէ վեր ունեցած գերազանցութեան: Այդ գերազանցութիւնն է անսխալ եւ անմահ հոգւոյ մը բանականութիւնն, որ եղած չէ սողոսկելու համար չեանաքարչ պղծութեանց մէջ, այլ վերանալու համար գէպի ակնադբիւրն բարւոյն և գեղեցիկին: Երբ ուրեմն մեր գործքերն կը համապատասխանեն ու կը պատշաճին երկնագէտ բանականութեան՝ կ'ըլլան գեղեցիկ, վայելուչ, բարի, առաքինի: Ըստ այսմ կարելի չէ «վայելուչը բարիէն բաժնել, վասնզի ինչ որ կը վայլէ՝ բարի է, եւ ինչ որ բարի է կը վայլէ» (յդ. Պտշ. Ա. 27. Կիկերոն): Ուրեմն ի՞նչ է բարութիւն. բարոյական գեղեցկութիւն, մարդկային բանաւոր կամքի պահանջն է հակառակ շարին, հակառակ աշխարհային ստորնայնցիչ հրապոյրներու, հակառակ երկրաքարչ ամէն կապտումներու: Ի՞նչ էր աշատութիւն. ճիշդ այդ բանաւոր կամքի ինքնորոշ շարժումն էր առ բարին. ուրեմն աշատութեան բնական ուղղութիւնն է բարին, առանց որոյ մարդու կամքը չի կրնար շարժիլ, որ ըսել է ազատութիւն չունենալը:

(Ճարտնակելի)

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ (*)

Ա. Լ. Թ. Ը. Ն. Ը. Գ. Ա. Պ.

Յիսուս Բրիստոս եալընըզ Բէնտի Բէնտիսինի

Ալլահ Էվլասը Բէսմիյէ Էքմէտի

Իլլա Ալլահա խաւս օլաւ մուհապէթի օե խաթէի

Շիմտիյէ գատար սէօյլէնիլէնլէրտէն անլաշըլըրը իւզըէ, Յիսուս Բրիստոս եալընըզ քէնտի քէնտիսինի Ալլահն Էվլասը Բէսմիյէ Էքմէտի, Ալլահա մախսուս օլան Թաղիմ, Թէքրիմ վէ ինթիրամը տա Թալէպ Էյլէմիշ տիր: Պու մէթալիպի արասընտա պիր Թանէ վար ալը քի օնը իպրամ վէ խարար իլէ Թալէպ Էյլէմիշ, միւքէմմէլ տէրէճէտէ օնա տէպթէս օլմուշ վէ պու Թալէպի Յիսուսը եէկեանէ պիր սուրէթլէ Թէրսիմ Էյլէմիշ տիր: Պու Թալէպ Էյիսուսըն ինսանլարտան խթէմիշ օլտուլը օ սուկուն, երւքսէք, միւսթապիլ վէ գահրամանանէ մուհապէթի տիր քի, սատէճէ պու մուհապէթի Թալէպ իթմէք ֆիքրի գարշըսընտա, օնը Թալէպ իտէնիս հէր տիրլիւ երւքսէքլիքլէրին ֆէվքինստ ալլահանի պիր երւքսէքլիքլէ մալիք օլտուլընը կէօրմէմէք վէ պունը իսթէմմէյէ ճէսարէթ Էթմիշ օլտուլը իշուն, օ մէհապէթէ տէպթէս պուլընտըլընա Թէաճճիւպ իթմէք գապլլ օլամալ, Վէ պու խարիպ իւլ աստէ վիւճուս հագգընտա պանս օլընտըլը վապըթ, ինսանի ապլըն աճիպ գալտըլը կիպի, օ ինսանլարըն մէհապէթիսի իսթէտիյի վապըթտա, ինսանլար Թարաֆընտան մարուզ գալաճալը ասալէթի, իսթէտիյի մէհապէթիս պէօյիւքլիւյիւ նիսպէթիստէ օնլարտան պուլըլ ու ասալէթ կէօրէճէյիսի տէ Էվլէլինտէն բէյլամպէրլիքլէ խապէր վէրիյօր: Վէ տէտիյի տէ հալֆիէն կէլիւլ չըքըյօր: Այսի վապըթտա հէմ սէլիլիյօր վէ հէմ խօրլանըլըյօր, հէմ քէնտիսէ Թարընըյօրլար վէ հէմ տէ երւքլիւնէ Թիւքլիւլիւյօրլար. ճիսնէթէ գատար քէնտիսինի սէլէնլէր վար օլտուլը կիպը, Թէհէվլիւր վէ զալապ բատտէսինստէ քէնտիսէ պուլըլ Էտէնլէր տէ մէվճուս տըր: Շիմտիյէ գատար կիւզէրսն օլան

(*) Տես Թիւ 133, էջ 143

օն տօգուղ ասրլար պու մհնապպէթ վէ ա-
տավէթի նէ թախֆիֆ էտէպիւմիշ վէ նէ տէ
պիր մանա վէրէպիւմիշ տիրլէր: Եւ՝ Յիսուս
իղթիտարմ տաիրէսինտէ սէնին ալլահլըղընը
արամաղա գալզըմըշըմ, էվվէլ էմիրտէ խա-
ֆիֆ վէ նիմ գաբալը պիր բէրտէ արգասըն-
տան կէօրիւր կիպի սէնին ինսանի սուրէթի-
նին արասընտան, օնըն քէշֆ օլունսըղընը
միւշահէտէ էյլէրիմ: Փապաթ շիմոի արթըզ
օնըն չիւլէլէր նէշը իթտիլինի կէօրիւրում
զանն էտիյօրմ: Պուլուլար զայիլ օլմուշ,
ասիւման սաֆ, աֆիթապ տա բարլայօր. սէ-
նին Ալլահլըղընըն աֆիթապը տըր միւրատըմ,
եւ՝ Յիսուս, պիրազ տա պիզէ եարտըմ էյլէ
քի սանա գարշը էլիմիզտէ գալան սօն չա-
րէմիզի, եանի պիլ իլթիզամ կէօզ գաբաթ-
լարըմըզը էնտիրէրէք շէմսի միւնիթէ: Ճէյ
կիւնէշ սէնի կէօրմէյօրմ տէմէյի սօն պիր
սիլահ հալինտէ գուլլանմայալըմ:

Պու թարիխին էսնայը թահրիրինտէ, Յի-
սուսըն սէվիլմէք, գալպլէրի ճէլպ իթմէք,
օնլարըն իւզէրինէ իհրազը մուպաֆֆարիյէթ
էյլէմէք եօլունտա քի ֆիթրինի իֆատէ էթ-
միշ օլտուղը պաշլըճա քէթթէլէրի հիքիայէ
էթմիշիզ: Մուռն պու եօլտաքի արզու վէ
թալէպինտէ իւշ շէյ կէօրիւրում քի, պիր
արայա կէլէճէք օլուրդարսա ինսան հիսսի-
յաթլարընըն թարիխինտէ պի էմսալ պիր
մէնզարէ թէշթիլ իտէրլէր:

Պիրինճիսի, Յիսուսըն հեքիս թարաֆըն-
տան սէվիլմէք իսթէմէսի տիր: Եազըզ, պիզ
պազը քիմսէլէրին մէհապպէթինէ մազհար օլ-
մագ իչուն նէ՝ գատար զահմէթ չէքիյօրուղ,
եւ հէր քէս թարաֆընտան սէվիլմէք թէ-
սավվուրընտա պուլընմագ պիզիմ իչուն գա-
պիլ մի տիր: Հէմ քիմ պուռնա թէսատտի էյ-
լէմիշ տիր: Հիշ պիր քիմսէ, մէզհէպլէրէ
միւլէսսիս օլանլար պիլէ պուռնը խայալլարըն-
տան կէշիրէմէմիշ տիրլէր: Հէմ սատաէթլի
օլմագ իչուն հէր քէստէն սէվիլմէյէ իհթի-
յաճըմըզ վսմը մը: Չօճուգլըղըմըզտա, պիր
բէտէր, պիր վալիտէ նազարը ալթընտա հա-
յաթա պէս ու միւպաշէրէթ էյլէյօր, պիզիմ
իլէ պէրապէր օյնահան, պազըրըշան պիրա-
տէր վէ հէմշիրէլէրլէ մուհաթ պուլուռնույօ-

րըզ, վէ եիւրէքլէրիմիզին սատաէթէ օլան
արզուսընա ուզուն միւտտէթ պու գատարը
քեաֆի օլույօր: Սօնրա պիրազ պէօյիւտի-
յիւմիւզտէ, շէպապէթ արգատաշլարըմըզ ա-
րասընտա թապիաթլարը թապիաթըմըզա,
միզաճլարը միզաճըմըզա մուվաֆըզ պազը
տօսթլար արայօրըզ, վէ պիր տանէ պուլ-
տուղըմըզտա, քէնտիմիզի պախթիյար ատտ
էյլէրիզ: Տահա սօնրա, շու հէմ տիրի վէ հէմ
ճիտտի օլան սիննիմիզին տէվրէսինէ գատէմ
պասըպ տա, օ վաղթա գատար պիզի մէ-
սուտ վէ մահզուղ էյլէյէն ճազիպէլէր արթըզ
քիֆայէթ էտէմէյինճէ, քէնտի քէնտիմիզէ
տէտիյիմիզ նէ՝ տիր, պիր կիւն պիր էվիմ,
սաքին թէմիզ պիր օճաղըմ վէ պազը տօսթ-
լարըմ օլաճագ, վէ Ալլահ միւսաատէ էտիպ
տէ նէճիզ, ալի, սատըզ պիր գալպէտէ թէ-
սատիւֆ էյլէրսէմ, սատաէթիմ իչուն պու
գատարը էլվէրիւր: Պու ճիւմէյէ մալիք օ-
լունտու մը, ֆիլհապիգա, ֆուրթուռալար
կէլէ պիլիւր, ինսանի իշլէրին աղըրըզը պա-
շըմըզը էյէ պիլիւր, ֆազաթ պիզի էզէմէզ,
չիւնքի պիր մէշճամըզ վար, պիր իսթինատ-
կեհաշըմըզ վար տըր: Իշթէ ինսանըն եիւրէ-
յի, օնա զսնի զանի նուր լաղըմ, պօլ պօլ
իհթիշամ կէրէք վէ վասի պիր սատաէթէ
իհթիեաճ վար տըր, հալպու քի մէհապպէթին
պիր տամասընը պուլտու մը, օ գատարը
քեաֆի տիր: Պինաէն ալէյ, Յիսուս Բրիս-
տոսըն ֆարզը սուրէթտէ տիւնհայա տախիլ
օլմասընը վէ հեքիս թարաֆընտան սէվիլմէք
իսթէր օլտուղընը պէյան էթմէսինի կէօրիւն-
ճէ, զաթէն ինսանտա տէրին պիր թէաճ-
ճիւպ հուսուլա կէլմէմէք գապիլ տէյիլ տիր:

Մա մաֆիյի տահա պու պիր շէյ տէյիլ
տիր: Յիսուս Բրիստոս հալընըզ հեքիստէն
սէվիլմէյի իսթէմէյօր, իլլա հէր պիր ֆէրտին
տէ հեքիս ճէյսհն իւսթիւն օլմագ իւզրէ քէն-
տիսինի սէվմէսինի տէ իսթէյօր, օնուն իս-
թէտիյի մէհապպէթ էն գալի, էն ճէօմէրտ
պիր մուհապէթ տիր: Ինսանը հուզուգաթը
նէֆոսնիյէտէն վազ կէշիրէն, հաթթա պազը
սըրալարտա գանըլլա շէհատէթ էթմէյէ գա-
տար իլէրի կիտէն պիր մէհապպէթ թալէպ
էտիյօր: Ամմա պէն նէ՝ տէյօրմ, օնըն ար-

զու էթտիյի մէհապպէթ , ինսանըն սայիր հէր մէհապպէթինէ թէֆէվվիւզ էտէն պիր մէհապպէթ տիր :

Պարզ իտէլիմ քի , սէն հէնուզ չօճուզ արն , բէտէր վէ վալիտէնի սէվէր վէ ծնլարա պէ'զլի իհթիրամ իտէրսին , Փագաթ նի'չուն չօճուզ ոքն տէյօրում , բէտէր վէ վալիտէսինի թալիմ , թէքրիմ էյլէմէյէն պիր եաշ վա'ր մը տըր : Հաթթա զանն էտէրսին քի պիզ սիննէն թէրագզը իտիպ տէ , էպէվէյնիմիզին միւհթէրէմ պաշլարը իւզէրինտէ սէնէլէրին աղըրըղը տա արթտըզճա , վէ ծնլարը զայիպ էտէպիլմէք իհթիրամի թէզաեիւտ էյլէտիքճէ , ծնլարա գարշը օլան հիսսիյաթը ֆէրզէնտանէմիզ պէօիւր , պէօիւր տէ ատէթա պիր բէրէսթիշ հայինի իւլըր : Պինաէն ալէյհ , շէքը ու շիւպհէ իսթէմէզ քի բէտէր վէ վալիտէմիզի էզ ճան ու տիլ սէվէր վէ հապպարընտա հէր տիւրիւ մէասիրի իհթիրամքարիյի իպրազ էյլէրիզ : Պագաթ իշթէ պիրի վար տըր քի բէտէրինտէն , վալիտէնտէն զիյատէ սէվիլմէք իսթէր , վէ պունը իսթէյէն Յիսուս Բրիտոս տըր . «Բէսէր վէ վալիթէսիճի պէնճէն զիյասէ սէվէն պունա յայրզ սէյիլ սիւր» :
(Մապաշի վար)

ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ԳԱՀԱՆԱՅԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ

ՈՐՔ ՅԱՐԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԻԻՐԵԱՆՑ
ԵՒ ՀԱՆԻՆ ԶՆԱ Ի ԳԱՀՆ ՎԱՍՆ ՄՈՒՑԹՈՒՆ
ՈՐ ԵՒ ՍՊԱՆԻՆ ԶՆԱ

(Շար.)

Արդ մեք դարձցուք ի մնացեալ պատմութիւնս : Քանզի իբրեւ ելին ի քաղաքէս զօրքն այլազգեաց եզին զայմախամ ի Ստամպուլ զՀասան փաշայն որ էր ի Շէհ-բէզուլ ի փաշայութիւն . և Ղարապայրամ ոմն Գափուճի պաշի հրամանաւ թագաւորին գնացեալ էր առնուլ զզլուխ սորա : Իսկ սուրա ծանուցեալ եսպան զնա . և ինքն փախաւ առ պարսս մարաց և ապրեցաւ : Իսկ ի ժամանակի վրդովման յանկարծ յայտնեցաւ աստ և միաբանեցաւ ընդ նոսա , որ և զայմախամ իսկ եղեւ : Յետ այսարիկ զկնի չըման զօրացն ի յԱդրիանուպոլիս , օր ըստ օրէ

գային ժամանէին գունդ գունդ եղեալ զօրք ի յԱսիոյ իբրեւ զսաստիկ շիթս յանձրեւաց և անցանէին Րումէլի : Բայց յոմանց եկելոց զօրացն ոչ տային թոյլ առ անցանել ընդ Ռումէլի և ոչ յիստամպուլ , այլ հրամայէին նստել յԱսկուտարն : Եւ մինչդեռ տակալին եկելոց ճանապարհորդացն ի յԱնդրիանուպոլսէ և ընդ մտանելն ի քաղաքս , պահապանք դրանց քաղաքիս կալեալ զնոսա տանէին առ Սէկպան պաշի քաղաքիս , և նա հարցանէր զնոսա թէ ուստի՞ գայք և կամ առ յո՞ երթայք , և ի նոցանէ զոմանս արձակէին խաղաղութեամբ և զոմանս արգելուին ի կալանս , և յառաջ քան զգնալ զօրացն ի յէտրէնէ՝ որոնեցին ի քաղաքս զքաղուժ տեղիս զմթերեալ գանձս յապարանս և ի տունս Մուֆթուն և համախոհից նորին , որք աստ և անդ թաղեալք էին : Հարցանէին և գտանէին զտեղիսն և պեղեալ զերկիր հանէին զոսկիս և արծաթս արկեղամբք և քսակօք ի յանձանօթ և ի ծածուկ տեղեաց ի միջոյ մեծամեծ մզկիթաց , ի խանէրաց , ի պէզեստէնից , ի պալատներաց , նաև ի ներքոյ պարտիզաց զրախտից և բուրաստանեաց զօղեցեալք և թագուցեալք : Այլեւ յայտնի ի պահեստ տուեալ զզրամս և զըողակս պէսպէսս , բերէին ինքեանք պահօղին և տային զնոսա վասն երկիւղի զօրացն : Քանզի մուհէտիկն գոչէր հանապազ ի քաղաքս եթէ՝ վա՛յ այնմիկ առն որ ի պահեալ զինչս մուֆթուն թագուցանիցէ և ոչ բերցէ ի յայտ , և թէ յետ երից աւուրց յայտնեցի՝ այն ակամայ՝ և ոչ կամաւ պահողին զապրանս նորա ևս յափշտակեցեն և և զտեարսն սպանցեն . այսպէս ծանիք և մի թագուցանէք : Վասն այնորիկ ամենայն ոք ինքնայօժար կամօք գային եւ ցուցանէին զինչս Մուֆթուն , գոնէ զի զինքեանս ապրեցուցեն և զվնասս մի՛ կրեցեն : Արդ զօրքն Ստամպուլոցնոց յուլիսի քսան և ինն ի ճանապարհ ելեալք և ժամանեալ ի Պապակոչեցեալ տեղին Օգոստոսի ամսոյ տան , երեքշաբթի օր , և բանակեցան անդ :

Եւ թագաւորն ժողովեալ զզօրս իւր իբրեւ զարս երեք հարիւր հազար , այլեւ վէ-

զիրն եւ եէնիչէրեաց աղայն եւ Քեանեայ պէկն, թէֆտէրտարն եւ այլք մեծամեծք զօրօքն իւրեանց ելեալ յէտրէնու եւ ճակատեցան ընդդէմ սոցա, եւ թագաւորն զկնի սոցա բանակեցաւ իւրովք զօրօքն որպէս օրէն է յառաջմէ:

Եւ Չալըղ Ահմէտ աղայն՝ զդեսպանս առաքեաց առ նոսա ասելով, եթէ մեք ոչ եկաք զի զսուրս քարշեսցուք ձեզ, իսկ եթէ դուք կամիք զի զմեզ սուր մաշել, ապա երկու ձեռք վասն միոյ գլխոյ կան պատրաստ. եւ նոքա ոչ լուան զայս՝ այլ ընդդէմ կային: Քանզի թագաւորն հրամայեաց Եէնիչարեաց աղային՝ զի Եէնիչէրիքն զմէթէրիզ առնեն¹, որ եւ հրամայեաց իոցոյ զմէթէրիզ առնել: Իսկ Եէնիչէրիքն պատճառելով ասեն թէ ցերեկս տօթ է եւ շող, ոչ կարեմք բրել զերկիր, այլ ի գիշերիս բրեսցուք եւ առցուք զմէթէրիզ: Իբրեւ յերեկոյացաւ եւ խաւարն թանձրացաւ գիշերին, Եէնիչէրիքն զսորհուրդ առեալ որք ի կողմն թագաւորին էին՝ ի մէջ գիշերին յանկարծ սկսան զթուֆէնկս իւրեանց ձգել՝ աստ է անդ, մանաւանդ ի կողմն թագաւորին արկանէին առաւել, եւ ի ձայնէ թուֆէնկիցն յարձակելոց՝ զամենայն զվայրսն որոտմամբ հնչեցոյց: Եւ ապա միաբանութեամբ ամենեքեան զաղաղակ բարձին զոչելով Ալլահ, Ալլահ, ասելով թէ անա Ստամպուլիք կոխեցին զբանակս մեր եւ յայսրմ աղաղակէ եւ ի ձայնէ թուֆէնկիցն վրդովեցաւ բանակն ամենայն որ ի կողման թագաւորին էին. քանզի գիշեր էր եւ ոչ կարէին զիրան ստուգապէս գիտել, եւ խռովեալ խառնակեալ աղմկեցան ամենեքեան. վասն որոյ զահի հարեալ թագաւորն փութացաւ եւ ի փախուստ զառնայր ի յէտրէնէ ի պալատն իւր: Եւ իբրեւ տեսին վէզիրն եւ աղայն եւ այլ մեծամեծք զփախուստ թագաւորին, ապա փախստն եւ նոքա, թողեալ զզէնս, զկահս եւ զկարասիս իւրեանց լիք. եւ հապճեպ փութացեալ փախստն եւ ծածկեցին զինքեանս իբրեւ զգողս. եւ ոչ

մնաց ի նոցանէ ի բանակն այր եւ ոչ մի: Իսկ Եէնիչէրիքն որ զխաբէռութիւնս արարին շեշտակի զաւետաւորս առաքեցին առ Նիշանճի Ահմէտ փաշայ վէզիրն, եւ առ Չալըղ Ահմէտ աղայն, եւ ինքեանք արշաւեցին ի բանակս փախչելոցն. եւ իբրեւ լուան սոքա զփախչիւն նոցա յառաջխաղացեալ մտին ի բանակս նոցա, եւ տեսին զվրանս նոցա լի ամենեւին կահիւք եւ կարասիւք, եւ յաւարի հարին զնոսա, այսինքն զարծաթս եւ զոսկիս կապուտ կողոպուտ արարին: Իսկ փախստական թագաւորն իբրեւ եմուտ ի պալատն իւր՝ եւ ասաց ցեղբայրն թէ Եկ եղբայր եւ ժառանգեա՛ զզահս մեր թագաւորական, քանզի այսուհետեւ քո է թագաւորութիւնս: Ասէ փոքր եղբայրն, միթէ եւ ես յիմա՛ր իցեմ իբրեւ զքեզ, որ քո բանիւզ նստիցիմ ի գահ. զի ի վաղիւն յորժամ զօրքն եկեացեն, զիս եւս իջուցեն ի գահէ, եւ լինիցիմ ծաղր իբրեւ զքեզ: Եւ ոչ նստաւ:

Իսկ ի լուսանալ չորեքշաբաթի սուաւօտուն Օգոստոսի միտասան, արշաւեալ զօրացն Ստամպուլցոց մտին ի յլեւորիսնուսօլիս, եւ եղին ի գահն արքայական զՍուլթան Ահմէտն, եւ առացին. Կեցցէ՛ արքայ. եւ զՍուլթան Մուսթաֆան եղին ի զաֆէս²:

Եւ իբրեւ նստուցին զնոր թագաւորն ի գահն՝ նոյն ժամայն խնդրեցին ի նմանէ զՄուֆթին, եւ նա ետ զհրովարտակ, ասելով թէ բերէք զփափազն զայն զի տեսից զնա, քանզի ունիմ հարցմունք ինչ ի նմանէ, եւ սոռեալ զհրովարտակն փութացան զօրք բազումք ի Ռումէլի եւ գտին զնա որ անդառտական չրջիւր, եւ պատահեալ նմա ի Տիմիթօգայու կողմն եւ կալեալ զնա՝ բերին յէտրէնէ կարի խայտառակութեամբ, եւ եղին ի լսանս Եէնիչարեաց աղային, զինքն եւ զորդիսն, եւ բազումք գնացեալ յերեսս նորա նախատէին եւ անարգէին, եւ այսպանելով ծաղր առնէին եւ ապա անտի հանեալ տարեալ ի զնտանն հասարակաց եւ իջուցին ի Դանլի զուլի: Բայց նոր թագաւորն զթուզ-

¹ Մերեքիս, պատնէշ յօրինել:

² Հրացան պարպել:

¹ Դաճէս, վանդակ:

սրն¹ իւր ի տուր հանեալ իբր թէ ի Ստամ-
պոլ երթիցէ։ Սակայն զօրքն յետս դարձու-
ցին զթուղս թագաւորին, եւ թագաւորն
կոչեալ զզօրսն հարցանէր թէ վասն է՞ր դար-
ձուցիք զթուղս իմ յետս։ Ասացին զօրքն .
վասն զի զճուղուս խնդրեմք։ Ասաց թագա-
ւորն . յետ երկից աւուրց տացից զճուղուսն
ձեր . եւ այնպէս արար որպէս ասացն։ Եւ
մինչդեռ կայր Մուֆթին ի Ղանլի զուլին եւ
որդիքն իւր ընդ նմա, յորոյ զպէսպէս եւ
զանազան զկոտորանս եւ զչարչարանս տային
եւ խախտեալ զպարանոցսն եւ զամենայն
յօդուածս ոտիցն եւ ձեռացն, եւ արջառաջ-
լիւք հարկանելով պահանջէին զգանձս, եւ
նոքա ողբալով ուրանային ամենեւին, եւ
զբազում աւուրս զբազում չարչարանս կրը-
եալ, աղաղակէր եւ կական բարձեալ լայր
յորոյ արտաւառք, եւ աղաչէր գողանիճան ա-
սելով թէ, Խնայեցէք ի ձերութիւնս իմ, եւ
ներեցէք զի Ուլէման եմ եւ էհլի քիթապ .
Իսկ նոքա եւս առաւել զայրացեալք՝ խստա-
ցուցանէին զլլկանս եւ զկոտորանս ի վերայ
նորա բազում հայհոյութեամբ ասելով, թէ
յիշեա՛ զի ո՛րքան զմայրս լացուցեր, եւ որ-
չափ անիրաւութեամբ զինչս եւ զգանձս ժո-
ղովեցեր։ Եւ եղեւ զի յաւուր միում յոմանց
մեծամեծաց զխահ պատրաստեալ թագաւո-
րին նորոյ, այսինքն անուշահամ նէֆէս² կե-
րակուրս եւ մատուցին նմա։ Իսկ նոր թա-
գաւորն ի կերակրէ անտի զմասն ինչ առաք-
եաց եղբօրն իւրոյ Սուլթան Մուսթաֆային .
եւ իբրեւ տարին զկերակուրն՝ ասէ Սուլթան
Մուսթաֆայն ցայրն որ զկերակուրն երբ .
Ձի՛ առաքէ զայս ինձ եղբայրն իմ. եթէ
զկամս իմ հաճել կամիցի, ապա ազատեցէ
զՀօճայն իմ. եւ յոյժ ստիպեաց զխահաբերն
այրն գնալ եւ ասել զայս եղբօրն իւրոյ։ Եւ

նա գնացեալ ասաց Սուլթան Ահմէտին ըստ
ըզձանաց եղբօրն . թէ եղբայր քո երէց զայս
ինչ խնդրէ ի քէն, ասելով թէ՝ «Չսող մի գիր
ո՛չ ուսաւ ի նմանէ, ո՛չ ապաքէն ուսուցիչ
եւ Հօճայ մեր է, զիա՛րդ ոչ ջանայ արձակել
զնա ի կապանացն»։ Իբրեւ լուաւ զայս Սուլ-
թան Ահմէտն, ասացեալ յեղբօրէ իւրմէ՝ առ-
ժամայն հրամայեաց եւ ետ զհրովարտակ զի
վաղվաղակի սպանցեն զնա։

(Շարունակելի)

ՄԷԹՈՏԻՍԹ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՊԱՇՏՅՈՆԵՒԻ ՄԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՔՈՑ ՆԿԱՏԱՄԲ

Անցեալները Ամերիկայի մէջ Մէթոսիսթ
կոչուած բողոքական քարոզիչ մը բնաբան
գրաւ սա խօսքերը . «Պիտի վերագառնա՛նք
Քրիստոսի . եթէ ոչ Անոր, հապա որո՞ւ»։

Պետոս Առաքելոյն խօսքն էր գրեթէ
(Յովհ. 2. 68) . «Տէ՛ր, որո՞ւ պիտի երթանք .
Դու յաւիտենական կեանքի խօսքեր ունիս»։

Բեռնասացը գիտելով թէ ա՛յն է ներկայիս
ընդհանուր հառաչը, ակնարկեց Քրիստոսի
ժամանակակից դպրոցներու, այս է՝ Սագու-
կեցւոց, կամ սկեպտիկներու . Փարիսեցւոց
կամ իւթապաշտներու . Ասսենեանց, կամ ճրգ-
նողներու և Քրիստոսի նմանողներուն։ Յայ-
տարարեց թէ այսօրուան դպրոցներն ալ
Քրիստոսի ատենուան պէս բաժնուած են
գործնականապէս . և անաջին երեք դպրոց-
ները՝ Քրիստոսի դպրոցին հետ համեմատու-
թեան դնելով, եզրակացուց թէ անոնք ան-
բաւական են, եւ անոնց պատկանող մարդիկ
գժգոհ եւ յոգնած, ձանձրացած են։ Եթէ ամէն
մարդիկ ուզէին դառնալ առ Յիսուս, ո՛հ,
ի՛նչպէս Անիկա իր Աստուածային կեանքը
անոնց մէջ պիտի դրոշմէր։ Նա միայն կրնայ
մարդուս սրտին փափագները գոհացնել, վասն
զի Ինք միայն ունի յաւիտենական կեանքի
խօսքերը։

Քարոզիչը կ'ըսէր նաեւ .

«Այսօրուան օրս մենք կը լսենք այնքան
դառն խժըժութիւններ՝ ժողովուրդը եկեղեցի
բերելու համար գործածուած այլեւայլ մէ-

¹ Թուղ, տեսակ մը թրքական գրօշ, որ է տէգի
մը ծայրը անցուած ձիու պոչ։ Այս նշանը հին ա-
տենները կը շնորհուէր մեծամեծ բաշտներու, որոնց
առջեւէն կը տարուէր. մինչեւ երեք հատ շնորհուած-
ներ կային (իւշ բուղլը)։ Թուղ կ'անուանուէր նաեւ
դարգմանակն իւր գլխազարդ։

² Նէֆիս, ընտիր, համադամ խորտիկներ։

Թոռներուն վրայ : Այս բանս ձեռք բերելու համար բողոքական աշխարհը գրեթէ մօտեցաւ ծայրայեղ ծիծաղելիութեան : Հանդիսատեսս եղանք Եկեղեցւոյ մէջ մոգական լապտերի ցուցադրութեան , ունկնդիր եղանք բանաստեղծական ճառախօսութիւններու : Ըսեցինք առաջնակարգ երգիչներ ու ճարտասաններ , բայց ժողովուրդը առաջուրնէ աւելի մօտ չեկաւ արքայութեան :

«Մենք աշխատեցանք՝ սպառելով ինչ որ կատարութեան սահմանները կը շօշափէր : մինչդեռ Կաթողիկէ Եկեղեցին , առանց իր կողմանէ ճիգ մը ընելու , հաւատար քայլերով յառաջացաւ իր յաղթական ճամբուն մէջ , լուծելով այդ հարցը իր նուիրապետութեան մեծ գոհունակութեամբ :

«Ի՞նչպէս յաջողեցաւ ան՝ այսչափն ընելու : Ի՞նչպէս յաջողեցաւ կիրակի օրերը , առաւօտ կանուխէն իր եկեղեցին լեցնելու բազմութեամբ : Բազմութեամբ մը , կ'ըսեմ , որ նախընթաց երեկոյ այնքան ուշ գացած էր անկողին : Ի՞նչպէս յաջողեցաւ ան կիրակի առաւօտ լեցնելու ճամբաները քրիստոնեայ հաւատացեալներով , մինչդեռ բողոքական աշխարհը մշիկ մշիկ կը քնանայ :

«Դիտեմ տրուած մեկնութիւններուն քսնի մը հատը , որոնք սակայն բան մը չեն մեկնիր : Մեկնութիւններէն մէկն այն է թէ՝ Կաթողիկէ Եկեղեցին միայն տգէտ մարդիկներ կը պարունակէ : Բայց մի'թէ այն Եկեղեցւոյ մէջ չենք տեսներ՝ աշխարհահռչակ , մեծիմաստ հանճարներ որոնք ջերմեռանդ են եւ կրօնքը կը գործադրեն : Եւ եթէ ստոյգ ալ ըլլար որ Կաթողիկէ Եկեղեցին տգէտներով լեցուած ըլլայ , մի'թէ իրեն պատուարեր պիտի չըլլա՞ր տգէտ խումբերը վարելու տակ ըլլալը : Վասն զի ստոյգ է նաեւ որ քրիստոնեայ աշխարհի մէջ ամէն բողոքական պաշտօնեայ քաջ գիտէ թէ ամենադժուարին գործը տգէտ խումբերու հետ հաշտ երթալն է : Եկեղեցի մը որ կարող է իր քով ժողովելու եւ բռնելու տգէտները , մեծապէս գնահատելի կենսականութիւն մը ունի անշուշտ :

«Սակայն եւ այնպէս քննադատութիւնը ճշմարտութեան չի համապատասխաներ : Ու

րիչներ կ'ըսեն թէ Կաթողիկէ Եկեղեցին յաջողելով երկիւղ ազդել , կը յաջողի նաեւ իր եկեղեցին ժողովրդով լեցնելու : Աս մեկնութիւնը առաջինէն աւելի արժէք չունի , կըրնայ հասկցուիլ թէ այս բանս հնար ըլլայ ենթադրել մէկ սերունդի համար , բայց ո՛չ ամէն սերունդներու համար : Բոլոր այս պատճառները ոչինչ կը մեկնեն , պէտք է իրաց գաղտնիքին ներքսագոյն եւս թափանցել :

«Ճշմարիտ պատճառը որուն համար Կաթողիկէ Եկեղեցին կը յաջողի , այն է թէ , անիկա միշտ հաւատարիմ եղաւ Աստուածային յայտնութեան ամբողջացուցիչ գործոյն : Անիկա Քրիստոսի մահը իր բոլոր ջերմեռանդութեան կեդրոնն ըրած է , եւ իր բոլոր ճիգերը կը թափէ այս ամբողջին շուրջը :

«Երբ ամէն կիրակի առտու կը տեսնէք խումբ խումբ մարդիկ որ Եկեղեցի կ'երթան , կրնաք վստահ ըլլալ թէ՝ անոնք չեն երթար գեղեցիկ երգեր ու երաժշտութիւն լսելու , անոնք չեն երթար աշխարհիկ նիւթերու վըրայ ճարտարահիւս ճառ մը մտիկ ընելու : Անոնք կ'երթան Ս . Պատարասը տեսնելու : Մենք զատիկա կ'անուանենք մեր Տիրոջ ընթրիքին կատարումը : Ամէն Կաթողիկէ գլխաւորաբար առ ցործը ն յատակ ունի : Կաթողիկէ եկեղեցի մը չհասած՝ ամենէն առաջ տեսնուած բանը ո՞րն է . — Խաչը : Կաթողիկէ մը՝ եկեղեցիի մէջ նստած չնստած՝ առաջին անգամ ի՞նչ կ'ընէ . — Սուրբ Խաչի նշանը : Ինքզինքը կը խաչակնքէ : Ի՞նչ է այն բանը որուն վերջին անգամ նայիլ կու տան Կաթողիկէ հոգեվարին . — Խաչելութիւնը : Դեռ ի տղայութեան , ան եկեղեցի կը մտնէ՝ Յիսուսի մահուամբը տոգորուած . ան՝ այս աշխարհէս կը չուէ՝ իր մտածութիւնը սեւեռելով Յիսուսի մահուան :

«Այս Եկեղեցւոյն գէժ մեր սնուցած ամէն կանխակալ կարծիքներուն հակառակ , անա՛գոնէ բան մը որմէ կրնանք շատ բան սորվիլ : Եթէ այս Եկեղեցին յաջողեցաւ՝ այնքան բարձրացնելով Խաչը , ինչո՞ւ պիտի չյաջողինք մենք ալ նոյնպէս ընելով :

«Որո՞ւ պիտի երթանք , եթէ ոչ առ Քրիստոս : Ամէն բարիք անոր քով է» :

Քարոզիչը սակայն չզիտցաւ կամ չկրցաւ ըսել՝ թէ, բողոքականութեան մէջ, ուր աւելն անհատ անկախ է, ո՞րն է այն իշխանութիւնը որ պիտի տանի առ Քրիստոս, Որուն յաւիտենական կեանքի խօսքերուն գլխաւորներէն մին է՝ «Որ ձեզ լսէ, ինձ լսէ»։ Բողոքականութեան մէջ չկայ Միութիւն, այլ հերձուած. հոն չկայ գլուխ, այլ պառակտում, հոն չկայ ուրեմն կեանք, այլ մահ. «Այր ի ճանապարհի իւրում մոլորեցաւ»։ Աւա՛ղ :

ԵՐԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ՝ ԳՐԲԷՆ

Գլ. 1. Ա. — Կ. ԺԺ. — Բարի կրօնաւորի մը երանակցացը վրայ :

(Շար.)

Երէ քառեպաշտօնեան կամ ընկերին օգտին հաւատ տոյրախան հոգեւոր հրահանգ մը զանց աւնուի, յիշի՞նք եւ վերջը անոր ձեռքը չեցնել :

Իսկ երէ ձանձաւանայով կամ անհոգութեան պատճառաւ դիտաւ բոլորէի, յաւակնաւ յանցապարհ կ'ըլլուի, եւ վնասը կը տուժուի :

Ձանձաւ որչափ որ կրնանք, սակայն եւ այնպէս շատ քաներուն մէջ քերել պակասութիւններէ զերծ չի պիտի ըլլանք :

Սակայն պիտի եւ միշտ որոշ քանի մը հաւատ աւաղադել, եւ մանաւանդ այն՝ քաներուն յիշմ որոնք աւելի արգելք կ'ըլլան մեզ :

Մեր արտաքին ու ներքին քաներն հաւաստապէս կը պատշիկն քննել ու կարգադրել, որովհետեւ երկուսն ալ կ'օգնեն յաւաղիւնութեան :

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Ս. Սահակի օրով Հայոց հայրապետանոցը եղած էր կեդրոնը ամբողջ Հայաստանի ռեալութեան. ամէնքը հոն կը գիւնէին Ս. Սահակէն իւրհուրդ եւ քաջաբերութիւն տանելու. թագաւորը ինքնին, իր աւագանիով մէկտեղ, անկէ կ'անհաճէր եւ անոր հըռ հպատակութիւնը ցոյց կու տար :

Բայց տիրանեց նախարարներէն մմանք, որ իրենց թագաւորին դէմ քէն ու դիւ կը պահէին, Պարսից Շապուհ թագաւորը՝ Խորովու դէմ գրգռեցին, ըսելով թէ անկախ Յունաց կայսեր հետ միաբանել է, եւ առանց քու հաւանութեանդ Սահակը կաթողի-

կոսական ամուր խորհրդացոյցեր է : Եւ երբ Շապուհ խորով թագաւորը Դուռը կանչեց, եւ ան յանձն շատ աւ երթալ, այն ատեն Շապուհ իր գահակից որդին Արտաշիւրը ստուար բանակով Հայաստան՝ զրկեց՝ չար նախարարաց սագրանքին համեմատ : Արտաշիւր առանց դժուարութեան բռնեց խորովը եւ շղթայաւ կապ Պարսկաստան տարաւ. եւ տեղը թագաւորը դրաւ անոր վաւաճապուհ եղբայրը. պաշտօնակի բրաւ նաեւ խորովու բարձրացուցած նախարարները եւ Սահակ կաթողիկոսը : Բայց այն միջոցին երբ Արտաշիւր, Շապուհի մեռնելէն վերջը թագաւորեց, թոյլ տուաւ որ Ս Սահակ նորէն վարէ իր պաշտօնը, որովհետեւ վերահասու եղաւ անոր առաքելութեան եւ բարեօր վարչութեան :

Այս միջոցին մեզաւ Հայոց Սպարապետ Սահակ սպարաւ. եւ Սուրբ Սահակ խնդրեց վաւաճապուհէն որ անոր տեղ Սպարապետ դուռի իր փեսան Համազասպ Մամիկոնեանը վաւաճապուհ հաւանեցաւ. բայց որովհետեւ Արտաշիւրէն կ'անհաճէր, Սուրբ Սահակ առանձին թուղթով՝ արտաշիւրին զրկեց որպէս զի այս եւ այսօրինակ մի քանի ուրիշ խնդիրներու մասին անոր հաւանութիւնը տանու :

Սուրբը երբ Պարսկաստան հասաւ մեծ սիրով ընդունուեցաւ Արքայից Արքայէն, որ տեղեկանալով անոր Պարթեւաց ցեղէն ըլլալը շատ պատուեց զանիկայ. կատարեց անոր խնդիրքը եւ մեծաշուք փառքով Հայաստան դարձուց : Արտաշիւր վաւաճապուհի նամակին պատասխանն ալ գրեց, որուն մէջ կը յիշէր որ թագուհեայ երախտքը Սահակի նախահայրը Անակին որ խորովը սպանելով՝ Սասանեանց թագաւորութեան կանգնումին մեծապէս սատարեց. կը յիշէր նաեւ մեծ բարեխորհրդիւնը Գրիգորի, որ Հայոց Տրդատ թագաւորին բժկութիւնը պարգեւեց :

Արտաշիւրի մեռնելէն վերջը թագաւորող վաւաճապուհը անոր ալ Հայոց հետ սիրով վարուեցաւ, որով Հայաստան բաւական խաղաղութիւն վայելեց, եւ Ս. Հայրապետը կրցաւ շարունակել իր հոգեւոր եւ աշխարհաշէն գործունէութիւնը : վաւաճապուհ բարեպաշտ թագաւորին ձեռնադրութեամբը նորոգեց վերաքինեց շատ եկեղեցիներ եւ վանքեր որոնք ժամանակին եւ յաւելաւ Պարսից արշաւանքներուն երեսէն տարած քանդուած էին : Ս. Հռիփսիմեանց վկայարանը նորոգելու ատեն տեսնելով թէ անոց նշխարաց տեղը չ'երեւիր, աղօթքով Աստուծոյ գիւնեց, եւ Աստուծոյ հաճեցաւ կատարել անոր խնդիրքը : Ս. Հայրապետը՝ Լուսաւորչի մասնիկով կնքուած Ս. Հռիփսիմի տապանին վրայ իր կնիքն ալ զարկաւ եւ դարձեալ առաջնաւ տեղը գիտեցից :

Նոյն ատենները Սահակի քով եկաւ իր մտերիմ եւ հոգեկցորդ բարեկամը Մաշտոց, որ Սուրբ Ներսէսի վախճանելէն վերջը քիչ մը ատեն տառապարկութիւն ըրած էր արքունի դրան մէջ եւ ապա առանձնաւաճալ ճգնաւորական կեանք կ'անցնէր : Ս. Հայրա-

պետը մեծ պատուով ընդունեցաւ Մեսրոպը և հրաման տուաւ իրեն ամէն տեղ քարոզելու։ Մեսրոպ անձնանուէր եռանդով էնքզինքը տուաւ այս անդուգական և վսեմ գործին։ Բայց շատ կը տրամէր տեանէ լով թէ հակառակ իր մեծ քանքերուն շատ քիչ արգիւնք յառաջ կու գար։ Եւ ասոր պատճառն էր Հայերէն լեզուով Ս. Գրքի և աստուածային պաշտամունքի չգոյութիւնը։ Այն տառնները եկեղեցականները ասորեբերն և յունարէն գիր և լեզու կը գործածէին եկեղեցւոյ արարողութեանց մէջ։ Ուստի ժողովուրդը բան մը չէր հասկնար անոնցմէ, եթէ մեկնոց մը չըլլար։ Ստոր համար Ս. Մեսրոպ հնարք կը փնտռէր հայերէն լեզուն գրով և դպրութեամբ օժտելու, և աստուածային գիտութիւնը մտայնորէն լեզուով տղան մէջ ծաւալելու։

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

(Շար.)

«Դառնալիքի կամ խորհրդոյ այս օրէնքին կամ կանոնին նպատակն էր՝ քրիստոնէութեան ամենասուրբ բաները կոռապաշտից անխորհուրդ և ստորին հետաքրքրութեան դէմ պաշտպանել, և կը տիրէր տառջին դարերու բոլոր շրջանի միջոցին, հայաժողովուրդի մտայնութեան զարգացման, մինչեւ Կոստանդնուպոլիս խաղաղութեան երջանիկ օրերը։ Բայց երբեմն բոլորովին արտաքոյ կարգի պարագաներուն համար, բացառութիւն բրած են այս օրէնքին ի մէջ այլոց, երբ Սուրբ Յուստինոս ստրպուեցաւ Անտոնիոս բարեպաշտ անուանուած կայսեր առջեւ ձայնը բարձրացնել, քրիստոնէականները ամբաստանուած սոսկալի ոճիրներէն անբասիր ընելու և պաշտպանելու համար։ Այս առթիւ գրեց իւր առաջին ջատագովականը, որուն մէջ իւր ժամանակի արարողական կանոններու մանրամասն նկարագրութիւն մը մեզի ձգեց՝ մասնաշնչելով արարողութեան զանազան մասերը, աղօթքները, Սուրբ գրոց ընթերցումը, ընծայումը, Սրբազործումը, Հաղորդութիւնը (ճաշակումը)։ Ոնցք այս վաւերագրով է որ գիտենք թէ, երկրորդ դարու Գոհութեան Խորհրդոյ արարողութիւնը, գրեթէ մեր պատարագին հաւասար բան մըն էր։

Ուրիշ թանկագին ակնարկութիւններ, ուրիշ բացայայտ ապացոյցներ խորունկ հաւատքի ի Սուրբ Խորհուրդն Հաղորդութեան կը հանդիպին, ինչպէս ամէն ոք գիտէ, Անտիոքայ Ս. Իգնատիոս Հայրապետին և Ս. Իրէնէոսի գործերուն մէջ՝ յերկրորդ դարու, Տերտուլիանոսի և Ս. Կիպրիանոսի՝ յերրորդ դարու։ Այս վկայութիւններուն կրնանք աւելցնել՝ ամենահին ծիսամատենաներուն վեկայութիւններն ալ (որոնք կը պատկանին հայաժողովուրդի ժամանակամիջոցին) եւ մարտիրոսներու վաւերական վկայաբանութիւնները, ինչպէս նաև Սրբուհւոյն Պերպետուայի հռչակաւոր վկայաբանութիւնը, Սեպտիմիոս Սեւերոսի ժամանակ։

Բայց օգէտք չէ այլ եւս ընդ երկար դանդաղիմ պատմութեան մէջ, և կ'աճապարեմ խօսելու Ս. Հաղորդութեան մինչև մեր օրերը հասած յիշատակարաններուն վրայ։

Հնադարեան յիշատակարաններն որոնց վրայ պիտի ճառեմ, ամէնն ալ առանց բացառութեան գերեզմանական (funéraire) են։ Կամ քանդակուած կամ երկաթագրչով զրծուած սրճանագրութիւններ են քրիստոնէայ գեանադամներուն շիրիմներուն վրայ, կամ հողաքարէ (tuf) ժայռերու մէջ փորուած այն ստորերկրեայ նկուղներու և մատուռներու պատերուն վրայ նկարուած որմանկարներ, և խորհրդանշական ձևերով զարդարուած մակտուր զնազաւածեւ վիմաշիրիմներ (sarcophage)։ Այս քարերուն և այս նկարներուն վրայ ընդհանրապէս կը տիրէ սլաւոնական և խորհրդաւոր լեզու, լեզու՝ որ բացայայտօրէն կ'ենթադրէ գաղտնիք մը բանային կանոնաւորուած, և որ իր մեկնութիւնը կը գտնէ հին և նոր Կաթարաններու և քրիստոնէոյ մատենագիրներու քանի մը հատուածներուն մէջ։

Սակայն եւ այնպէս բոլոր այս խորհրդանշանները մէկ գաղափարի միայն կը յանգին, որ է՝ յիշել թէ ինչպէս ննջեցեալներն կը հաւատային քրիստոնէութեան վարդապետութիւններուն և հաւատարմութեամբ կը մատչէին անոր խորհուրդներուն, և հայցել յաւիտենական խաղաղութիւն ու երջանկու-

թիւնը այն հոգեւոյ համար որոնք իրենց հաւատարմով և քրիստոնէական առաքինութեանց մարզանքներով արժանի եղան երկնաւոր ուրախութեան :

Եւ եթէ քրիստոնեայ վաղեմի արուեստին խորհրդանշ ծածկաբանութեան բնոյթը քրիստոնէութեան բոլոր հրամանակարգ վարդապետութիւնները ամենախոր գաղտնիքով մը կը քողարկէ, ևս առաւել խորհրդաւոր եւ գաղտնածածուկ է այն ամէն բանի նկատմամբ որ կը վերաբերի Ս. Հաղորդութեան, զեռածին Եկեղեցւոյ գաղտնիքներուն ամենափափուկը, որմէ կը հարկադրուէր նա հետաքննելու հեթանոսներու աշխոհմ հետաքրքրութիւնը, Ս. Խորհուրդներու ամենավսեմը, զոր՝ նոյն իսկ Յիսուսի Քրիստոսի պատուիրանին համաձայն, կը պարտէր պահել պահպանել սրբապիղծներէն :

Այս մեծ խորհրդեան խորհրդանշներէն (synbole) մէկը «Որբ» կամ որթատունկն է որ մտածել կուտայ Աւետարանի «Եւ եմ որբն Եւսուիս»-ին և Ս. Հաղորդութեան տեսակներէն մէկուն վրայ. զայն ներկայացուած կը տեսնենք Հռոմայ գեանադամաններուն ամենահին մասերուն մէջ, ինչպէս՝ Դոմիտիլայի գերեզմանատան մէջ «Փլարիանեանց վաւիթը» և «Ամպլիտոսի մատուռը» . արդ այս երկու շինուածներն առանց ո՛ր և է տարակուսի կը վերաբերին Եկեղեցւոյ առաջին դարուն :

Ինչ վերջը, այնքան հանրածանօթ եղող «Հովիւ Բաջ»ի նկարը կը ստեղծէ նոր խորհրդանշ մը՝ աւելի բացայայտօրէն վերաբերող Ս. Հաղորդութեան, այսինքն է «Կաթ», խորհրդաւոր այն կերակուրը զոր բարի հովիւը կը ջամբէ իւր ոչխարներուն . և ահա, Ս. Կալիստոսի պեանադամանին մէկ մատրան մէջ, գեղեցիկ նկար մը բարի հովուին՝ կաթի ամանով, զիւրաւ ճանաչելի սպիտակորակ գոյնէն : Եւ սուկէ շատ հեռու չեղող ուրիշ մատրան մը մ.ջ, կը տեսնենք խորհրդանշական կերակուրը՝ զրուած սեղանի մը վրայ, երկու ոչխարներու միջեւ . ամենամեծ կարեւորութիւն ունեցող խմբանկար մըն է այս . որ կը ցուցնէ մեզի Հաղորդութեան ա-

ռակ օրինակի կաթը նոյն ինքն բարի հովուին Հաղորդութեան սեղանը զոր շուրջ կը պատեն ու կը պահպանեն Քրիստոսի հաւատացեալք :

Սրբուհւոյն Պերպետուայի վկայարանութիւնը այս օրինակեալ նշանին լաւագոյն մեկնութիւնը կուտայ . ասիկա շատ թանկագին յիշատակարան մըն է քրիստոնեայ հին գրականութեան, գրուած նոյն ինքն վկայուհիին ի սկզբան անդ երրորդ դարու, մինչդեռ կը սպասէր բանալի մէջ իր չարչարանաց ժամը . հոն կը պատմէ տեսիլք մը զոր ունեցած էր քնոյ մ.ջ . խորհրդաւոր հովիւը երեւցաւ իրեն, և զինքը՝ մարտիրոսութեան պատրաստելու համար, անոր ճաշակեցուց յոյժ քաղցրահամ թանձր կաթ . զոր ինքն առաւ ջերմեռանդութեամբ . մինչ ներկայք միաբերան կ'ըսէին ծիսական բանաձեւը՝ Ամեն :

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԻՐԻ ԱՐԻԻՐ մեր հօրեղանէն անհետ կ'ըլլայ, իր ճառագայթները ալ եւս ուղղակի մեզի չեն հասնիր : Բայց շատ փշերներ իր լոյսը լուսնին ամբողջ սկաւառակին կամ անոր մէկ մասին զարնուելով կ'անդրադառնայ եւ աղօտ լոյս մը կը ձգէ երկրիս վրայ : Այս աղօտ լոյսը կ'ըսուի լուսնկայ կամ լուսնացուք (clair de lune) :

Նոյնպէս լուսնի սկաւառակին այն մասը որ առեւ չի տեսնուիր, կը լուսաւորուի երկրիս արեգդէմ մակերևոյթին անդրադարձ լոյսովը, որ կ'ըսուի երկրացուք (clair de terre) : Այս երկրէս անդրադարձած լոյսին շնորհիւ է որ նոր լուսնին առաջին օրէն իսկ անոր ամբողջ սկաւառակը աղօտափայլ կը տեսնուի :

Մ. Ֆրանգ վ. Վէրի, մասնաւոր լուսնագիտով մը բազմաթիւ լուսնին այս մասին պայծառութիւնը, անոր արեգդէմ մասին պայծառութեան հետ եւ տեսաւ թէ վերջինը 1600 անգամ աւելի է առաջինէն :

ՇԻՔԱԼՈՅԻ մէջ վերջերս օրիորդներու ակումբ մը կազմուեցաւ որուն անգամուհիներուն թիւը կը հասնի հիմայ 60ի : Ակումբը իր անգամուհիներուն հետ ամուսնանալ ուղղող այրերէն կը պահանջէ գահացուցիչ պատասխաններ հետեւեալ հարցումներուն :

«Կը խոստանա՞ս կինդ նկատել իբրեւ քեզի հաւատար քաղաքական եւ ընկերական տեսակէտով, եւ ըստ այնմ ալ վարուիլ անոր հետ»:

«Վատթար ունակութիւններ ունի՞ս, օրինակի համար, աւրումը թիւնէն, ծիւղումը թիւնէն»:

«Կը խոստանա՞ս այնպէս նայիլ զսքանչիդ ինչպէս կը նայիս բոլ բուն մօրդ»:

«Կանոնաւոր կերպով եկեղեցի կ'երթա՞ս. գանձանակը ո՞րչափ կը ձգես»:

«Կը խոստանա՞ս տանը մէջ հեղահամբայր ըլլալ, եւ կերակուրի մասին կնոջդ դէմ քրթմընէններ կշտամբանքներ չընել»:

«Կը խոստանա՞ս իրիկունները տունդ անցընել»:

«Խօսք կուտա՞ս Աստուծոյ տանը պատուիրանները պահելու»:

ԱՆԳՂԻՌՑ Հնդկական գաւառներուն, Սէլլանի, եւ Պիրմանիայի մէջ կաթողիկէութիւնը օրէ օր յառաջ կ'երթայ: Այս երկիրներուն մէջ եկեղեցին ունի 9 արքեպիսկոպոս 30 եպիսկոպոս եւ 4 առաքելական կառավարիչ:

Եւրոպայի քահանայից թիւը, որ 1851ին Հնդկաստանի մէջ 190 էր, Սէլլանի մէջ՝ 34, Պիրմանիայի մէջ՝ 13, հասած էր 1911ին, Հնդկաստանի մէջ 968ի, Սէլլանի մէջ՝ 167ի, Պիրմանիայի մէջ 91ի, համապատասխան 1226: Ասոնց վրայ աւելցնելով տեղացի 1676 քահանաները, այս առաքելութեանց մէջ դործող քահանայից թիւը կ'ըլլայ միահամուռ 2902: 561 եղբայրներ եւ 2961 քույրեր թանկագին օժանդակութիւններ կ'ընծայեն այս առաքելներուն:

60 տարի առաջ Հնդկաստանի մէջ կային 750 եկեղեցի եւ մատուռ, Սէլլանի մէջ՝ 149, Պիրմանիայի մէջ՝ 7: 1911ին այս թիւերը բարձրացած էին 4914, 712ի, եւ 480ի:

Դպրոցներու մասին նոյն յառաջդիմութիւնը ցոյց կը տրուի: Ուսանողներու թիւը տասնապատուած է: 1911ին 250,400ի կը հասնէր: Ասոնք կը գտնուէին 26 ընծայարանի, 29 կրօնուսոյց դպրոցի, 17 վարժոցի, 246 երկրորդական եւ 3102 նախնական վարժարաններու մէջ:

Ամբողջ կաթողիկէներուն թիւը, որ 1851ին Հնդկաստանի մէջ 964,249էր, Սէլլանի մէջ՝ 146,320, եւ Պիրմանիայի մէջ 3000, բարձրացած էր, 1911ին, Հնդկաստանի մէջ 2,203,333ի, Սէլլանի մէջ՝ 322,168ի եւ Պիրմանիայի մէջ 88,447ի: Այս կաթողիկէները զբեթէ ամբողջ տեղացի են. օտարներուն թիւը հազիւ 5 առ հարիւր է:

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ վերջերս աւազակներու կողմէ սպաննուեցաւ Հայր Ռիշ առաքելալը: Հայր Ռիշ իր ժիպէս, Ալէն եւ թայլ եղբայրակիցներուն հետ լինշաօ դացած էր, հոն չինական նոր տարւոյն առթիւ հոգեւոր կրթութիւն մը ընելու համար:

Զրոյց կը շրջէր թէ շրջակաները աւազակներ կան: Իսոյց բնակիչները վտահեւելով Ուանկ զօրավարին վրայ, կը պատրաստուէին ըստ սովորութեան հանդիսաւորապէս կատարելու ամանորի տօնը: Սակայն իրենց վտահեւելը պարսպի ելաւ աւազակներու ջախջախիչ թիւովը, որ կը հասնէր վեց, եօթը հազարի, մինչդեռ Ուանկ հազիւ հարիւր զինուոր ունէր իր տրամադրութեան տակ:

Յունուար 25ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 4.30ին ահագին մռնչիւններ լսուեցան ամէն կողմէ, քաղաքին մէկ մասը բոցերու մէջ էր:

Յելուզակները ժամը 9.30ին Հայրերուն բնակած տունը խուժեցին եւ դրամ ու զէնք սահանքեցին: Քանի մը խօսքի փոխանակութենէ վերջը աւազակները քիչ մը հանդարտեցան: Տունը աւարեցին եւ ապա Հ. Հ. Ժիպէսը, Ալէնը եւ թայլը՝ իրենց սեղանը լուսնին քովը տարին: Հ. Ռիշը որ ամենէն ծերն էր տունը մնաց:

Աւազակներէն մէկին գլխովը շարժելով՝ Հ. Ժիպէսին թոյլ տուաւ որ վանատուն դառնայ եւ պաշտպանէ Հ. Ռիշը եթէ կարելի է: Հ. Ժիպէս եւր դարձաւ՝ եկեղեցիէն վատ՝ իրենց ամբողջ շէնքերը հրդեհի բռնուած եւ Հ. Ռիշի դիակն ալ սպրտէ: Ղին մէջ ձգուած գտաւ Ուստի դարձաւ նորէն իր երկու ընկերներուն քով. եւ երեքը միասին ելան լուսնին առջեւ, որ լուրջ պատկաւաւորու մարդ մը կ'երեւար: Լուսնին խիստ քաղաքավարութեամբ վարուեցաւ հետեւին, եւ իրենց յայտարարեց թէ ինք կաթողիկէ եկեղեցւոյ թշնամի չէ: Յաւ յայտնեց Հ. Ռիշի մահուան համար եւ հրամայեց որ կաթողիկէ եկեղեցւոյ արարողութեամբ հանդիսապէս թաղին անոր մալ մինչէ:

ԼՈՒՐՏԻ ՄԷՋ ԳՈՒՄԱՐՈՒՆԵԼԻՔ Ս.ՄԵՆՍ.ՍՈՒՐԻ ՀՍ.ՂՈՐԻ ՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԾՈՂՈՎԻՆ ԱՌԹԻ

Գեր. Կ. Վ. Գալիկեան կը զրկէ մեզի ի հրասարակութիւն՝ քրեհին քաղաքակրթիւնը այն նամակին զոր Ս. Հաղորդութեան երեւելի քաղաքներէն Հ. Տիւրան հրասարակած է ի Պելճիսա եւ ի Գաղիսա, անոր մէջ յիշատակութիւն ընկելով Անկիւրիոյ մանուկներուն ալ այս Համաժողովներուն ի հեռուս մասնակցութիւնը, աղօթով ու մահացուցումներով, զորս Հ. Տիւրան գովասանօք կը հրասարակէ նոյն իսկ Համաժողովոյն մէջ: Ինչպէս կը տեսնուի Տիւ. Գր. նամակին մէջ, զոր նոյն Հաղորդութեան հետ Գեր. Գալիկեան Վ., այս տարուան համաժողովին համար եւս կը խնդրէ որ Անկիւրիոյ տղայք միմեկնոյն գո՛նէ հոգեւորական մասնակցութիւնը ունենան: Փափագելի էր որ ամեն քեմերու մէջ Կաթողիկէ համաշխարհեան այս գեղեցիկ գործը կատարէր:

ԽՄՐ.

1914 Յուլիս արճատ Լուրս նամ մահալլ-
սէ վագր օլահագ Ամենասուրբ Հաղորդու-
թիւն հորհուրդը պէյն էլ միլի ինքիմար ու-
մուսիսի իչին սիւպիանա խիքսպէն պի-
ղաչ սեօզ:

Սեկիլիզիւ հալսազարմ,

Սէնէի հալիւնէն էն միւհիմ տիւանէթ-
կիւսթէր վոճգուսթլարնտան պիրի, պիւա
չէք ու շիւպէն Յուլիս արնտա, Լուրտ համ
գութլու մահալլտէ վագր օլահագ, Ամենա-
սուրբ Հաղորդութիւն հորհուրդը պէյն էլ
միլի ինքիմար ումուսիսի տիր:

Ֆիլվագը, Ամենասուրբ Հաղորդութիւն
հորհուրդը իչին ինքիմար ումուսիսի թէշ-
քիլ ու թէրթիպ էթմէք ֆիքրի նէճիպի,
էվլէլ մատմաղէլ Ռամիզիէն նամ տիւանէթ-
փէրվէր գատունն գալպինտէ վիճուտա կէ-
րիպ, Լիւ շէհրի աղիղի թապիր օլընան Ֆի-
րիպեր Վերոնն ինքիմար դայրթի վէ Սէ-
կիւր համ սէրփիսգոպոուն թէշէպիւհիւ.
Ֆէալիւնէթփէրվէրանէսի սայէսինտէ մէվքիւր
Լիւ Շէհրինտէ իւք տէֆա օլարագ րէսմէն վէ
ալէնէն քիւլաա իտիլմիշ օլտըր իչին, ին-
քիմար ումուսիսի մէվքիւրն 25ինճի սէնէի
տէվրիւնէսինն Ֆրանսա էօլքէսինտէ ինքա
իտիլմէսի փէք հագլը վէ լայրըլ միւնասէ-
պաթ ճիւմէսինտէն իտի, Ֆագաթ պէօլէ
պիր զիգլթիթ խաթըրէնին 25ինճի սէնէի
տէվրիւնէսինն Ֆրանսանն հանլը շէհրինտէ
ինքա էթմէլի իտի, Ամենասուրբ Հաղորդու-
թիւն հորհուրդը ինքիմար ումուսիսի
րէսմէն թէրթիպ էտէն տիւանէթփէրվէր զէ-
վաթըն ֆիքրինտէ Լուրտ շէհրի շէհրինին
ինթիիապը գարարկիր օլտու, Լուրտ իսէ,
Ֆրանսա մէմալիքինտէն, վէ Ամենասուրբ
Հաղորդութիւն հորհուրդը զիչնէթ վէ թէ-
գահիւրաթընն սըգ սըգ վուգու պուլտըր
գութլու շէհր վէ Քրիսթիւնան ճիւհանն մէ-
տինէի ապտէսէսի վէ 25 սէնէյէ գարիպ պիր
վագթտան պէրու Հաղորդութիւն աֆիթա-
պընն հուգուրընտա քէնէնի քէնտիսինի
քիւսուֆա թապի գըլարագ, սէմալի էվլա-
սընն միւհիթէշէմ մուգաֆիթիւնէթինէ իշ-
թիրաք էթմէք իւզըն միլլէթլէրի տալէթ է-

տէն լէքէսիզ Համիլէ օլմուշ օլան Սուրբ Կոյս
Մարիամն չըլնատըլը լաթիֆ վէ տիւպէր
մահալլ տըր, Ֆիլհագիգէ, օրատա վագր օ-
լան Ամենասուրբ Հաղորդութիւն հորհուրդը
միւլալաա ալայլարընտա վէ պիլ խասա Հա-
ղորդութիւն Ալլահը Յիսուսն կիւզէրկեա-
հընտա հուսուլա կէլէն հիւսպըզ միւճիւզէ-
լէրի թաատատ էթմէք գապիլ մի տիր, Պու-
անէտէկին վուգու պուլան լճթիւմալար իչին,
Սիւպիանն տուա վէ խալըր աւէլ ինքալա
Հաղորդութիւնա հագլաշմալարըն պէն էքի-
տէն թալսիյէ էլլէտիկիմ կիպի, պու սէվ-
կիւլիւ թըֆըլարըն տախի, քէմալը աչգ ու
իշթիպաք իլէ, տալլէթլէրիմէ ինագլէթ էթ-
միշ օլտըլարընը ալէնէն սէօլլէմէքլէ քէսպի
Ֆախըր էլլէրիմ — Ճանլարըն սէլամէթինէ
տուա իլէ ետըրմ իթտիքլէրի իչին, Սուրբ
Փիլիպպոս Նէրինն, օրսու մուսլիմիքի
թէսմիյէ էթտիկի, շու կիւնահըզ թըֆըլ-
լարըն, շիմտիյէ տէկին ինքա էլլէտիքլէրի
տուա, ասարը տիւանէթ վէ մահրուսիւնէթ
վէ հէման գահրէմանի քէսրի նէֆա վէ ա-
պաշխարութիւնլարըն զիքրինի ետա էթմէք
պիր վագլիթէի միւլթիթլիլէ տիր, Մալթա-
տա չըգան սէնէ վուգու պուլան Ամենասուրբ
Հաղորդութիւն հորհուրդը ինքիմար ումու-
սիսինն թէշմինի մուվաֆֆագընէթ իչին,
Քիւլիւք Ասիատա վագր, Էնգարէ 400 զըզ
չօճուլարընն իպրագ էլլէտիքլէրի շէվզ ու
դայրէթ վէ տուա վէ մահագուցումլարը զիքր
էթմէք քիաֆի տիր, Իւշ կիւն միւլթէմա-
տիւն գուրու էքմէքտէն պաշգա շէյ եէմէ-
յէրէք, սրբութիւնա հագլաշմայա մէշգուն
օլանլար, սըգ սըգ սէմալի սօֆրատան նէ-
վալէլին օլարագ, աչգ ու իշթիւագ իլէ
տուա էթմիշլէր վէ իշ պու տուայա ծոմ վէ
փէրհիլի տախի իլալէ էթմիշլէր իտի, Պու
գատար կիւնահըզ վէ թէմիլ Եիւրէքլէրտէն
սունուլան տուա վէ նէճիպ գուրպանլարտան
սօնրա, Ամենասուրբ Հաղորդութիւն հոր-
հուրդը ինքիմար ումուսիսի իւզէրինէ թէ-
պէրրիւքաթըր րէպպանիւնէ վէ էլթաֆը սէ-
մալիւնէնին նիզուլ էտէճէկինէ քիմ թէրէտ-
տիւտ էտէպիլիլը, Իշթէ, պու էճիւտէն, պու
տէֆա, իչին ֆէվքէլատէ էհէմիւնէթինէ նա-

զարէն, Յուլիս այնտա Ամենասուրբ Հաղորդութիւն խորհուրդը Սուրբանը, Սուրբ Կոյս Մարիամըն գութլու շէնքինսէ, սիգին իւր Հաղորդութիւնընըն Ալլահը վէ պիգիմ ազիզ գուրթարընըն Յիսուսըն մուգաֆֆէ-րիեթինի թէւմին վէ ինթիշամընը թէզեիտ էթմէք իւզրէ Գաթօլիք ճիհանըն պիւ ճիւմ-լէ քիւշիւք չօճուզլարընը վէ պախուսուու Գաթօլիք Սիւպիանըն չիրքէթի ումումիեթ-սինէ մէնսուպ՝ օլ խաշակիր կէնճլէրի տուա-յա, մահացուցումա, փէրհիւքեարընը վէ պիւ-ճիւմլէ քէսրի նէֆս իճրալարընա տալէթ էթ-մէք վազիֆէսինսէ գուսուր էթմէյէճէկիմ պէտիհիաթտան իտի:

